

Անհրաժեշտ ըովէներում ճանապարհով գական գիտողութիւնները աեղի են առաջ հայ երկրի մասին տեսութեանը; Այնչը երկու անգամ է այցելել Հայաստանին. 1893—94 թ. և 1898: Գրքի ընագիրը լոյս է ընծայուել 1900 թ. մինչև այդ ժամանակն էլ գրականութիւնը նկատողութեան է առնուած: Այն՝ ինչ որ երեացել է վերջին տասն տարիներում, հեղինակը չէր կարող ինկատի ունենալ, իսկ ուսուերէն հրատապակութիւնը հարկաւոր չէ համարել լրացնել: Թէ այս հանդամանքը և թէ այն, որ Այնչը չգիտէ ուսուերէն նիւթը մի քիչ հնացած է երեսում, մանաւանդ պատմական ուսումնասիրութիւնների մէջ:

Պօֆ. Ն. Մառի վաստակների մասին հեղինակը միայն ելոյ գետէ (տ. I. եր. 483), մինչդեռ գրանք բոլորովին տակն ու վրայ են արել մաս տեղեկութիւնները Անիի քաղաքակրթութեան և Բագրատունիների շրջանի պատմութեան մասին: Վանի քաղաքակրթութեան մասին Մ. Նիկոլովու ուսումնասիրութիւնները ըստ երեսութին նոյնպէս յայտնի չեն հեղինակին, եթէ գիտէ էլ, երկրորդ աղքեւըց, բելք և Լեմանի վաստակներից, գիտէ: Հարկ չը կայ ասել, որ նա տեղեկութիւն չունի ուսուաց աւելի պակաս և աւելի ինքնուրոյն վաստակների մասին:

Հրատարակիչները, որ ըստ երեսութին, ոչինչ չեն խնայել ընադրի ըոլոր ճոխութեամբ և լոյս ընծայել գիրք, միայն մի ըանի վերաց հոգո չեն տարել, որ թարգմանութեան խմբագրութիւնը յանձնուած լինէր մեր յայտնի արևելագէտներից մէկին: Այն ժամանակ գիրքը կը լինէր գիտութեան վերջին խօսքը: Մակայն, կրկնում ենք, այժմեան իսկ ձեռվ, նա Հայաստանի մասին ուսուս զրականութեան մէջ պատուաւոր տեղ կը բռնի:

## 8. Ա. Ե.

### II

Հայերեն հին արձանագրութիւնը Սիմֆերոպոլում.

«Երարատ»-ի այս տարսուայ առաջին համարի մէջ տպուած էր Սիմֆերոպոլի հնագարանի հայերէն հին արձանագրութեան ըռվանդակութիւնը այնպէս, ինչպէս այն կարգացել է պ. Խովհաննիսեանը:

Յաւելով պէտք է ասել, որ պարոնի կարգացածը ուղիղ չէ. այս բացատրում է, ի հարկէ, այն հանդամանքով, որ նա ձեռքի տակ չի ունեցել յաջող էստամպաժներ:

5 սիւնակից բաղկացած արձանագրութիւնը նա կարդում է այնպէս, կարծես դա բաղկացած լինէր 4 սիւնակից, այսինքն՝ միացնում է առաջին երկու սիւնակները, որոնց համապատասխան տողերը կարդում է անընդհատ։ Այդ երկու սիւնակներից, որոնք շատ եղծուած են, կտրելի է հասկանալ, թէ խօսուում է Այլիքէի մասին, որի ամուսինն է գրողը։ Ամուսինները շատ են ուզում արու զաւակ տեսենալ, որ և ունենում են բայց։

Այսու որդիո այս ծնանի  
Յետ ծննդեան աւուրց ի-ի

Դնա մանէ հող տապանի։

Երբորդ սիւնակի սկզբի  $1\frac{1}{2}$  տողը անհասկանալի է։ յետոյ շատ պարզ է, որ երեւի կնոջ

• • • • խելքն նվազի

Բայց ես գերիս առա ոչ էի

Կոստանդնուպոլիս համբաւն առի

Եղուկ այնը նոր լսեցի

Զկողակիցն իմ ի տապանի

Զհեր գլխոյս փետատեցի

Նմանեցայ խելագարի։

Չորրորդ սիւնակի առանձին տառերը հեշտութեամբ կարգացւում են, բայց կտապակցական իմաստ համարեա՛ չի գուրս գալիս։

Հինգերորդը ջարդուած է բոլորովին։

Յամենայն դէպս հաստատ երեւում է, որ համաճարակ հիւանդութեան տեղ չըկայ՝ ինչպէս կարծում է պ. Խ. Յ.-ը։ Նրա գուրս բերած յատուկ անուններից կայ միայն Այլիքէն։

Նրա խելքնազ անուան տեղ պարզ կարդացւում է խելքն նվազի։ Կոստանդինոս պէտք է կարդալ Կ. Պոլիս։ Ղուկաս=եղուկ այնր։ Հերգալ=զիեր զիսոյս։ Սափեստատես=փետատեցի։ Նրա յիշած միւս յատուկ անուններն էլ, որը ան գիտենք, ժանօթ լեզուններից ոչ մէկի մէջ էլ չեն գործածում։

Սխալում է նա, երբ գտնում է զսմատ (պարսկերէն ճակատագիր) բառը։

Արձանագրութեան ընդհանուր իմաստը հասկանալի է մեր ըերած հատուածներից։

Միակ արժէքաւոր եղբակացութիւնը, որ կարելի է հանել այս արձանագրութիւնից, այն է, որ Արիմի հայերը առևտրական յարաբերութիւններ են ունեցել Պօլսի հետ։

Սիմֆերոպոլ։

Վարդան Բարիեան